**Հաստատում ենք՝**

## ԳԱՐԵԳԻՆ Բ
## ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՕՐԻՆԱԿԵԼԻ
# ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

(*) աստղանիշով փարբերակված հոդվածները թեմական ներկայացուցչական ժողովի կողմից ընդունվելուց հետո դառնում են պարփադիր բոլոր թեմերի կանոնադրություններում ընդգրկելու համար:

1. Ընդհանուր դրույթներ

**Հոդված** 1.1*Թեմը աշխարհագրական որոշակի փարածքում գործող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եկեղեցական համայնքների (այսուհետեւ՝ ծուխի), կազմավորվող ծուխերի եւ վանքերի միությունն է՝ ընդ իշխանությամբ թեմակալ առաջնորդի:

*Ծանոթագրություն: Վանքերը կարող են հիմնվել կամ վերաբացվել Ամենայն Հայոց Հայրապետի կողմից դրանց կանոնադրությունների հաստատվելուց հետո:*

**Հոդված** 1.2*Թեմն անբաժան մասն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, որի կենտրոնն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

**Հոդված** 1.3* Թեմը ղեկավարվում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոններով եւ Սրբազան Ավանդությամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրահանգներով, փվյալ երկրի օրենսդրությամբ եւ թեմական կանոնադրությամբ:

**Հոդված** 1.4*Թեմը հաստատվում է Հայրապետական կոնդակով:

**Հոդված** 1.5*Կանոնադրության 1.2, 1.3 եւ 1.4 կետերը փոփոխության ենթակա չեն:

**Հոդված** 1.6 Թեմի կանոնադրությունն ընդունվում է թեմի Հիմնադիր ժողովում, իսկ փոփոխություններն ընդունվում են թեմի թեմական պատգամավորական ժողովում (այսուհետեւ՝ Թ-ՊԺ) եւ ուժի մեջ են մտնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատվելուց հետո:

**Հոդված** 1.7 *Թեմի կանոնադրությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի

կողմից հաստատվելուց հետո, անհրաժեշտության պարագային, ներկայացվում է պետական պատկան մարմիններին՝ գրանցման եւ իրավաբանական անձի կարգավիճակ ստանալու համար:

**Հոդված** 1.8*Թեմի կառավարումն իրականացնում են՝

ա/ Առաջնորդը,

բ/ Թ-ՊԺ-ն,

գ/ Թեմական խորհուրդը (այսուհետեւ՝ Թ-Խ):

**Հոդված** 1.9*Թեմի բաղկացուցիչ մասերն են՝

ա/ ծուխերը,

բ/ վանքերը:

*Ծանոթագրություն: Առանձին վանքեր կարող են գտնվել ուղղակի*

*Հայրապետական իշխանության ներքո:*

**Հոդված** 1.10*Թեմը պարեկան հատկացում է անում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին իր բյուջեի 4%-ի չափով, որպես «Լուսավորչի լումա»:

*Ծանոթագրություն: Ըստ Ազգային եկեղեցական Ժողովի որոշման (1945 թ. 4-րդ նիստ, 20 հունիս):*

2. Ծուխ

**Հոդված** 2.1*Ծուխը վարչական որոշակի տարածքում (այս անուն քաղաքում կամ շրջանում) բնակվող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զավակների միությունն է:

**Հոդված** 2.1.1* Ծուխն անբաժան մասն է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (այս անուն) թեմի, որի հոգեւոր կենտրոնն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

**Հոդված** 2.1.2*Կանոնադրության 2.1.1 կետը փոփոխության ենթակա չէ:

**Հոդված** 2.1.3 *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (ՀԱՍԵ) զավակներ են՝

ա/ ՀԱՍԵ մկրտված եւ դրոշմված, Հայ Եկեղեցու վարդապետությունը դավանող եւ

սուրբ խորհուրդներն ընդունող, կանոններն ու սրբազան ավանդությունները պահպանող անձինք,

բ/ Հայազգի անձանց հետ ամուսնացած օտարազգիները, որոնք ընդունում են ՀԱՍԵ վարդապետությունը, սուրբ խորհուրդները, կանոններն ու սրբազան ավանդությունները:

գ/ Այլազգիների անդամ դառնալու վճիռը կայացնում է առաջնորդը՝ ըստ սահմանված կարգի:

**Հոդված** 2.2 *ՀԱՍԵ զավակ լինելուց դադարում են, եթե՝

ա/ հրաժարվում են եկեղեցու հաղորդությունից,

բ/ գործում են ՀԱՍԵ կանոնների դեմ:

**Հոդված** 2.3 *Ծուխի կառավարումն իրականացնում են՝

ա/ Հոգևոր հովիվը,

բ/ Ընդհանուր անդամական ժողովը (այսուհետև՝ ԸԱԺ),

գ/ Ծխական խորհուրդը:

**Հոդված** 2.4*Ծուխը Թ-ՊԺ-ի կողմից սահմանված կարգով պարենկան հապկացում է կատարում թեմին:

3. Հոգևոր հովիվը

**Հոդված** 3.1 *Հոգևոր հովիվ կարող է լինել քահանայական ձեռնադրություն ունեցող (ամուսնացյալ կամ կուսակրոն) հոգևորականը:

**Հոդված** 3.2 Նույն ծուխում կարող են ծառայել այլ քահանաներ (ամուսնացյալ կամ կուսակրոն)՝ իբրև հոգևոր հովվի օգնական:

**Հոդված** 3.3 *Հոգևոր հովիվը նշանակվում և ազատվում է թեմակալ առաջնորդի կողմից՝ թեմական և ծխական խորհուրդների հետ խորհրդակցելով:

**Հոդված** 3.4*Հոգևոր հովիվը նախագահն է ծխական բոլոր կառույցների՝ ի բաց առյալ վերստուգիչ հանձնաժողովի:

**Հոդված** 3.5 Հոգևոր հովվի պարտականություններն են՝

ա/ իրականացնել ավետարանական քարոզչություն, զբաղվել հովվական.
կրոնա-կրթական և դաստիարակչական գործունեությամբ.

բ/ կազմակերպել իր հոգևոր խնամքին հանձնված հավատացյալների հոգևոր կյանքը.

գ/ ներկայացնել ծուխը միջեկեղեցական կյանքում տեղական մակարդակով.

դ/ ներկայացնել ծուխը առ որ անկ է:

4. Ընդհանուր անդամական ժողովը

**Հոդված** 4.1*ԸԱԺ-ը ծուխի բարձրագույն մարմինն է:

**Հոդված** 4.2*ԸԱԺ-ի անդամներն են ծուխի վարչական տարածքում բնակվող 18 տարին լրացած, Հայ Եկեղեցու տրապու զավակները:

**Հոդված** 4.3*Անդամներն իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու, եթե առնվազն մեկ տարի անդամ են և վճարել են անդամավճարը:

**Հոդված** 4.4 ԸԱԺ-ը գումարվում է տարին առնվազն մեկ անգամ՝

ա/ Ծխական խորհրդի հրավերով՝ հոգևոր հովվի և ատենապետի
ստորագրությամբ,

բ/ հոգևոր հովվի կամ ծխական խորհրդի հրավերով՝ թեմակալ առաջնորդի
արտոնությամբ,

գ/ անդամների 1/3-ի գրավոր պահանջով:

**Հոդված** 4.5 ԸԱԺ-ի գումարման թվականը և օրակարգը ծանուցվում է նվազագույնը 1 ամիս առաջ՝

ա/ Տրապու անդամներին գրավոր հրավեր ուղարկելով,

բ/ Եկեղեցու հայփարարությունների փախփակում,

գ/ Ծուխի պաշփոնաթերթում (եթե կա),եթե երկրի օրենքներն այլ մոփեցումներ չեն պահանջում:

**Հոդված** 4.6 ԸԱԺ-ը վավերական է անդամների 1/3-ի ներկայության դեպքում:

**Հոդված** 4.6.1 Անդամների 1/3-ի ներկայությունը չապահովելու դեպքում նշանակվում է ժողովի նոր թվական՝ առնվազն 2 շաբաթ հետո, որը վավերական է համարվում անկախ ներկաների թվից:

**Հոդված** 4.7*Ընդհանուր անդամական ժողովի նախագահը հոգեւոր հովիվն է:

**Հոդված** 4.8Ընդհանուր անդամական ժողովի իրավասություններն են.

**Հոդված** 4.8.1 Ընտրել՝

ա/ Իր անդրանիկ նիստում ժողովը վարող դիվան՝ ատենապետ, փոխատենապետ, ատենադպիր եւ փոխատենադպիր, որոնց լիազորությունները շարունակվում են մինչեւ հաջորդ ժողովի դիվանի ընտրություն:

- Քվեախույզ հանձնախումբ (քվեները հաշվող), որ գործում է մինչեւ հաջորդ ժողովի Քվեախույզ հանձնախմբի ընտրությունը,

բ/ Ծխական խորհուրդ,

գ/ Վերստուգիչ հանձնաժողով նույն ժամկետով, ինչ Ծխական խորհուրդը,

դ/ Ընտրողական հանձնաժողով եւ եթե կա՝ կալվածոց տեսչություն,

ե/ Պատգամավորներ թեմական պատգամավորական ժողովի համար 4 տարի ժամանակով:

*Ծանոթագրություն: Պարտադիր է թեկնածուների առնվազն երկանուն ցանկը յուրաքանչյուր մեկ տեղի համար:*

**Հոդված** 4.8.2*Ընդունել հոգեւոր հովվի, ծխական խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի եւ ծխական մյուս մարմինների զեկույցներն ու հաշվետվությունները:

**Հոդված** 4.8.3 Առաջարկներ բերել թեմական պատգամավորական ժողովին թեմի գործունեության եւ կանոնադրական հարցերի վերաբերյալ:

**Հոդված** 4.8.4*Հաստատել ծուխի եկող տարվա բյուջեն եւ գործունեության ծրագիրը:

**Հոդված** 4.8.5*Ընդհանուր անդամական ժողովի որոշումները եւ ծուխի տարեկան բյուջեն ենթակա են առաջնորդի եւ թեմական խորհրդի վավերացմանը:

5. Ծխական խորհուրդը (ԾԽ)

**Հոդված** 5.1*ԾԽ-ն ծուխի գործադիր մարմինն է՝ հոգեւոր հովվի նախագահությամբ:

**Հոդված** 5.2*ԾԽ-ի անդամներն ընտրվում են ԸԱԺ-ի կողմից (5-ից մինչեւ 15 անձեր՝ կենտ թիվը պահելով): ԾԽ-ն ընտրում է իր դիվանը՝ ատենապետ, փոխատենապետ, ատենադպիր, փոխատենադպիր, գանձապահ:

**Հոդված** 5.3 ԾԽ-ի ժողովներին կարող են մասնակցել ծուխում հոգեւոր հովվի օգնական քահանա հայրերը (ամուսնացյալ կամ կուսակրոն), առանց քվեարկության իրավունքի:

**Հոդված** 5.4*Եթե ԾԽ-ի որևէ անդամ դադարում է գործելուց, նրա տեղն զբաղեցնում է հաջորդ առավելագույն թվն ստացած անձնափոխանորդը:

**Հոդված** 5.5*Անձնափոխանորդների քանակը չի կարող գերազանցել ԾԽ-ի ընտրված անդամների թվի կեսը, այլապես պետք է կատարվի վարչության նոր ընտրություն:

**Հոդված** 5.6 ԾԽ-ի պաշտոնավարության տևողությունը որոշում է Թ-ՊԺ-ն:

**Հոդված** 5.7 ԾԽ-ի անդամները կարող են ընտրվել հաջորդաբար երկու անգամ:

**Հոդված** 5.8 ԾԽ-ի պարտականություններն ու իրավասություններն են՝

ա/ աջակցել հոգևոր հովվին՝ ապահովելու ծուխի տարածքից ներս ավետարանական քարոզությունը, կրոնա-կրթական և դաստիարակչական գործունեությունը, ծիսական կյանքը.

բ/ հայթայթել բյուջեն.

գ/կազմել ծուխի տարեկան բյուջեն և ներկայացնել ԸԱԺ-ի վավերացմանը,

դ/ իրագործել ԸԱԺ-ի որոշումները.

ե/ ի կատար ածել թեմակալ առաջնորդի հրահանգներն ու Թ-Խ-ի որոշումները,

զ/ հաստատել ԾԽ-ի իրավասության ներքո հանձնախմբեր՝ իր լիազորությունների շրջանակում.

է/ ընդունել ԾԽ-ի իրավասության ներքո գործող կառույցների (տիկնանց, երիտասարդաց, կիրակնօրյա, քրիստոնեական դաստիարակության. մարզային, բարեսիրական և այլն) հաշվետվություններն ու գործունեության ծրագրերը.

ը/ վարել ծուխի ընթացիկ գործունեությունը:

**Հոդված** 5.9*ԾԽ-ի լիազորությունները դադարում են, եթե՝

ա/ ընտրված անդամների 50%-ից ավելին դադարում են գործելուց կամ համալրվում են անձնափոխանորդներով,

բ/ ԾԽ-ը գործում է ծուխի կամ թեմի կանոնադրությանը հակառակ: Այս դեպքում թեմի առաջնորդը և Թ-Խ-ը լուծարում են ԾԽ-ը և նոր ընտրություններ նշանակում:

6. Ծուխի ֆինանսական և գույքային միջոցները

**Հոդված** 6.1 Ծուխի միջոցները գոյանում են՝

ա/ մոմավաճառությունից և ծիսական առարկաների ու գրականության վաճառքից,

բ/ խորհրդակատարություններից,

գ/ նվիրատվություններից,

դ/ անդամավճարներից,

ե/ թեմակալ առաջնորդի և Թ-Խ-ի արտոնությամբ իրագործվող տնտեսական գործունեությունից,

զ/ հիմնադրամներից:

**Հոդված** 6.2*Ծուխի ֆինանսական միջոցները ծախսվում են ըստ ԸԱԺ-ի

կողմից ընդունված եւ թեմական առաջնորդի ու Թ-Խ-ի կողմից վավերացված բյուջեի:

**Հոդված** 6.3*Ծուխի անշարժ գույքը կարող է օտարվել ԸԱԺ-ի որոշմամբ, Թ-Խ-ի եւ առաջնորդի արտոնությամբ՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

7. Ծուխի ստեղծումը եւ լուծարումը

**Հոդված** 7.1 *Ծուխը ստեղծվում եւ լուծարվում է թեմական առաջնորդի եւ Թ-Խ-ի հաստատումով:

**Հոդված** 7.2 *Ծուխի լուծարման պարագային, ծուխի պարտավորությունների կատարումից հետո ֆինանսական եւ գույքային միջոցներն անցնում են թեմին:

8. Առաջնորդ

**Հոդված** 8.1* Թեմի առաջնորդը, Քրիստոսի Սուրբ Եկեղեցու Սրբազան Ավանդության եւ եկեղեցական կանոնների համաձայն, նվիրապետական աստիճանով եպիսկոպոս է:

**Հոդված** 8.2* Առաջնորդը ընտրվում է՝

ա/ Թ-Խ-ի կողմից ներկայացված եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված եռանուն ցանկից,

բ/ Ամենայն Հայոց Կաթողիկոսության իրավասության ներքո գործող առնվազն 35 տարեկան կուսակրոն հոգեւորականներից:

**Հոդված** 8.3* Առաջնորդի ընտրությունը կատարվում է Թ-ՊԺ-ում եւ հաստատվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

*Ծանոթագրություն: 8.2 եւ 8.3 կետերը գործում են բացառապես առաջնորդի ընտրության ավանդույթ ունեցող թեմերում, այլապես առաջնորդը նշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:*

**Հոդված** 8.4 Առաջնորդի պաշտոնավարության շրջանն անժամկետ է:

*Ծանոթագրություն: Որոշ թեմեր, առժամապես, կարող են պահպանել որոշակի ժամկետով պաշտոնավարության սկզբունքը:*

**Հոդված** 8.5* Առաջնորդի պաշտոնավարության վերջնաժամկետը 70 տարեկանն է: Թ-ՊԺ-ի խնդրանքով, Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նրա պաշտոնավարությունը կարող է երկարաձգվել:

**Հոդված** 8.6*Առաջնորդի պաշտոնավարությունը կարող է դադարեցվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից սահմանված կարգով (տե՛ս հավելված 1):

**Հոդված** 8.7 Առաջնորդը պատասխանատու է թեմում իրականացվող՝

ա/ ավետարանական քարոզության,

բ/ հովվական եւ դաստիարակչական գործունեության,

գ/ ծիսական կյանքի,

դ/ տեղական մակարդակի միջեկեղեցական եւ պետական մարմինների հետ հարաբերությունների համար:

**Հոդված** 8.8* Առաջնորդը.

ա/ նախագահն է թեմական բոլոր կառույցների (ի բաց առյալ վերստուգիչ հանձնաժողովի),
բ/ նշանակում եւ ազատում է հոգեւոր հովիվներին՝ թեմական եւ ծխական խորհուրդների հետ խորհրդակցելով,
գ/ իրավասու է միայն իր թեմի համար ձեռնադրություն կատարելու, կուսակրոն հոգեւորականի պարագային ունենալով ձեռնադրյալի պատկանելիք միաբանության հոգեւոր պետի օրհնությունը,
դ/ հաստատում է առաջնորդարանի պաշտոնեության հաստիքացուցակը Թ-Խ-ի հետ խորհրդակցաբար,
ե/ իրավասու է սահմանված կարգով կարգապահական տույժեր եւ խրախուսանքներ կիրառել թեմում ծառայող հոգեւորականների նկատմամբ,
զ/ պարեկան զեկույց է ներկայացնում եւ հաշվետու է Թ-Պ-Ժ-ին,
է/ պարեկան հաշվետու զեկույց է ներկայացնում Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

9. Թեմական պատգամավորական ժողով

**Հոդված** 9.1 *Թ-Պ-Ժ-ը թեմի բարձրագույն մարմինն է՝ առաջնորդի նախագահությամբ:

**Հոդված** 9.2 Թ-Պ-Ժ -ն գումարվում է տարին առնվազն մեկ անգամ:

**Հոդված** 9.3 * Թ-Պ-Ժ–ն գումարվում է ծուխերից եւ վանքերից ընտրված հոգեւորական եւ աշխարհական պատգամավորներով:

**Հոդված** 9.4 *Բոլոր հոգեւոր հովիվները եւ վանահայրերն ի պաշտոնե Թ-Պ-Ժ-ի անդամ են:

**Հոդված** 9.5 Թ-Պ-Ժ-ը հրավիրվում է՝
ա/ առաջնորդի եւ Թ-Խ-ի հրավերով,
բ/ պատգամավորների 1/3-ի գրավոր պահանջով:

**Հոդված** 9.6 Թ-Պ-Ժ-ն իր անդրանիկ նիստին ընտրում է՝
ա/ հաշվեքննիչ (քվեները հաշվող) հանձնաժողով,
բ/ դիվան (ատենապետ, փոխատենապետ, ատենադպիր, փոխատենադպիր), որը վարում է ժողովը եւ որի լիազորությունները շարունակվում են մինչեւ հաջորդ պատգամավորական ժողովի դիվանի ընտրությունը:

**Հոդված** 9.7 * Թ-Պ-Ժ -ն ընդունում է թեմի կանոնադրությունը ներկաների 2/3-ի քվեներով:

**Հոդված** 9.8 *Թ-Պ-Ժ-ն ընտրում է՝
*ա/ առաջնորդ՝ Թ-Խ-ի կողմից ներկայացված եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատված եռանուն ցանկից,
*բ/ Թ-Խ 1/3 հոգեւորական եւ 2/3 աշխարհական, առանձին անվանացանկերով,
*գ/ Ազգային-եկեղեցական, թեմական-ներկայացուցչական եւ այլ համաեկեղեցական ժողովների պատգամավորներ
դ/ վերստուգիչ հանձնաժողով,
ե/ ընտրողական հանձնախումբ,

գ/ կալվածոց պեսչություն,

է/ ի պահանջել հարկին՝ այլ մարմիններ:

*Ծանոթագրություն: Պարտադիր է թեկնածուների առնվազն երկանուն ցանկը*

*յուրաքանչյուր մեկ պեղի համար:*

**Հոդված** 9.9 Թ-ՊԺ-ը հաստատում է՝

ա/ Թ-Խ-ի հաշվետվությունը,

բ/ առաջիկա տարվա բյուջեն:

**Հոդված** 9.10 Թ-ՊԺ -ն ընդունում է՝

ա/ առաջնորդի զեկույցը,

բ/ Թ-Խ զեկույցը,

գ/ վերստուգիչ հանձնաժողովի տեղեկագիրը,

դ/ թեմական այլ կառույցների տարեկան գործունեության հաշվետվությունները:

10. Թ-եմական խորհուրդ

**Հոդված** 10.1 *Թ-Խ-ը թեմի գործադիր մարմինն է:

**Հոդված** 10.2 *Թ-Խ-ն ընտրվում է Թ-ՊԺ-ի կողմից 7-13 անդամներով (կենտ թվերով) 2-4 տարվա ժամկետով:

**Հոդված** 10.3*Թ-Խ-ն իր առաջին նիստին ընտրում է դիվան՝ ատենապետ, փոխատենապետ, ատենադպիր, փոխատենադպիր, գանձապահ:

**Հոդված** 10.4 *Թ-Խ-ն իր նիստերը գումարում է նվազագույնը տարին 4 անգամ,առաջնորդի եւ ատենապետի հրավերով:

**Հոդված** 10.5 Թ-Խ-ն ի կատար է ածում Թ-ՊԺ-ի որոշումները եւ հաստատած թեմական ծրագրերը:

**Հոդված** 10.6 Թ-Խ-ը հաստատում է ծուխերի, ինչպես նաեւ թեմական այլ կառույցների գործունեության հաշվետվությունները:

**Հոդված** 10.7 Թ-Խ-ը ճշտում է ծուխերից ընտրվող Թ-ՊԺ-ի ներկայացուցիչների թվաքանակը՝ ըստ Թ-ՊԺ-ի կողմից հաստատված կարգի:

**Հոդված** 10.8 *Թ-Խ-ն վավերացնում է՝

ա/ Ծուխերի ընդհանուր անդամական ժողովների ատենագրությունները,

բ/ Ծխական խորհուրդների ընտրությունները:

**Հոդված** 10.9 *Եթե Թ-ՊԺ-ի գումարումը հնարավոր չէ, Թ-Խ-ն ի զորու է ընտրել թեմական-ներկայացուցչական եւ այլ համանկեղեցական ժողովների պատգամավորներ, ի բաց առյալ Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների:

**Հոդված** 10.10*Եթե Թ-Խ-ի որեւէ անդամ դադարում է գործելուց, նրա տեղը զբաղեցնում է հաջորդ առավելագույն քվե ստացած անձնափոխանորդը, սակայն անձնափոխանորդների քանակը չի կարող գերազանցել Թ-Խ-ի ընտրված անդամների թվի կեսը:

**Հոդված** 10.11*Թ-Խ-ը վաղաժամկետ դադարեցվում է.

ա/ երբ ընտրյալ անդամների 50%-ից ավելին դադարում են գործելուց կամ համալրվում են անձնափոխանորդներով,
բ/ երբ Թ-Խ-ը գործում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոններին եւ սույն կանոնադրությանը հակառակ:
Խնդիրը Թ-ՊԺ-ի կողմից լուծում չստանալու դեպքում քննության է առնվում եւ հաստատվում ԳՀԽ-ի կամ եպիսկոպոսաց ժողովի կողմից: Այս պարագային Ամենայն Հայոց Կաթողիկոսը լուծարում է Թ-Խ-ի կազմը եւ նշանակում նոր ընտրություններ:

11. Վերստուգիչ հանձնաժողով

**Հոդված** 11.1*ՎՀ-ը թեմի ֆինանսա-տնտեսական գործունեությունը ստուգող մարմինն է:

**Հոդված** 11.2*ՎՀ-ն ընտրվում է Թ-ՊԺ-ի կողմից, գործունեության 4 տարի ժամկետով, բաղկացած 3 անձից:

**Հոդված** 11.3ՎՀ-ն առնվազն տարին մեկ անգամ քննում եւ հաստատում է թեմի առաջնորդարանի եւ թեմական կառույցների ֆինանսա-տնտեսական գործունեությունը:

12. Ընտրողական հանձնախումբ

**Հոդված** 12.1 *Ընտրողական հանձնախմբի լիազորությունները սահմանվում են Թ-ՊԺ-ի կողմից:

13. Կալվածոց տեսչություն

**Հոդված** 13.1 *Կալվածոց տեսչության լիազորությունները սահմանվում են Թ-ՊԺ-ի կողմից:

14. Թեմի վարչական գործունեությունը

**Հոդված** 14.1 *Թեմի վարչական գործունեությունն իրագործվում է առաջնորդի եւ նրա ղեկավարությամբ գործող առաջնորդարանի գրասենյակի կողմից:

**Հոդված** 14.2 *Առաջնորդարանի պաշտոնեությունը նշանակվում եւ ազատվում է առաջնորդի կողմից: Տնօրենները նշանակվում եւ ազատվում են առաջնորդի կողմից՝ Թ-Խ-ի հետ խորհրդակցաբար:

15. Թեմի հասույթները

**Հոդված** 15.1 * Թեմի հասույթները գոյանում են
ա/ ծուխերի եւ վանքերի տուրքերից,
բ/ նվիրատվություններից,
գ/ կտակներից,
դ/ տնտեսական գործունեությունից:
ե/ հիմնադրամներից:

16. Թեմական կանոնադրության փոփոխություններ

**Հոդված** 16.1* Թեմական կանոնադրության մեջ փոփոխությունները ընդունվում են ԹՊԺ-ի կողմից 2/3-ի քվեարկությամբ, բացառությամբ 1.2, 1.3, 1.4 եւ 2.1.1 հոդվածների, որոնք կանոնական ուժ են ստանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հաստատվելուց հետո:

**Հոդված** 16.2*Թեմական կանոնադրության փոփոխությունները անհրաժեշտության պարագային ենթակա են պետական գրանցման:

17. Թեմի ստեղծումը եւ լուծարումը

**Հոդված** 17.1*Թեմի ստեղծումը, բաժանումը, միացումը այլ թեմերի հետ կատարում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ սրբատառ կոնդակով:

**Հոդված** 17.2*Թեմի լուծարումը կատարում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

**Հոդված** 17.3*Թեմի լուծարման պարագային թեմի սեփականությունն անցնում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**Հոդված** 1.1 Թեմակալ առաջնորդի պաշտոնավարությունը դադարեցվում է
ա/ Ամենայն Հայոց Կաթողիկոսի փնօրինությամբ,
բ/ հիվանդության պատճառով՝ ծառայելու անկարողության պարագային,
գ/ առաջնորդի դիմումի համաձայն,
դ/ Հայ Եկեղեցու կանոններին հակառակ ընթացք ունենալու պարագային,
ե/ լուրջ մեղադրանքի հաստատման պարագային,
1. Թեմակալ առաջնորդի դեմ մեղադրանքները ներկայացվում են թեմական խորհրդին:
2. Թեմական խորհուրդը քննելուց հետո ներկայացված մեղադրանքները, ելնելով քննության արդյունքներից, հարցը կարող է ներկայացնել Թեմական պատգամավորական ժողովին:
3. Թեմական պատգամավորական ժողովը ստեղծում է հատուկ հանձնախումբ հարցը քննելու:
4. Մեղադրանքները հաստատելուց հետո Թեմական Պատգամավորական Ժողովը փաթեթը ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:
5. Վերջնական որոշումը պատկանում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:
*Ծանոթագրություն: Առաջնորդը կարող է օգտվել ինքնապաշտպանության իրավունքից եկեղեցական բոլոր ատյաններում:*

Ուղենիշը ընդունվել է հոկտեմբերի
30-ից նոյեմբերի 4 կայացած թեմական
ներկայացուցչական ժողովի կողմից